«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
“Civil Contract” Party
ՔՊԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարածքային զարգացում, տրանսպորտ

- Հիմնանորոգելու եւ բարեկարգելու ենք ներհամայնքային ճանապարհները, մայթերն ու փողոցները:
- Բարեկարգելու ենք համայնքային պուրակները, հիմնելու ենք նորերը:
- Կառուցելու ենք մանկական և սպորտային խաղահրապարակներ:
- Բարեկարգելու ենք բազմաբնակարան շենքերի բակային տարածքները, շքամուտքերն ու տանիքները:
- Բարեկարգելու ենք համայնքի հասարակական տրանսպորտի բոլոր կանգառները:
- Մշակելու ենք ներհամայնքային տրանսպորտի նոր երթուղիներ, որպեսզի յուրաքանչյուր բնակավայրի բնակիչ ունենա հարմարավետ և հասանելի փոխադրամիջոց՝ դեպի քաղաքի տարբեր հատվածներ:
- Հետևողական ենք լինելու, որպեսզի Վաղարշապատ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից դեպի Էջմիածին քաղաք երթուղային կապը դառնա ավելի հարմարավետ, ժամանակին ու ճկուն՝ համապատասխան համայնքի բնակիչների իրական կարիքներին:

Սպասարկում, առևտուր

- Արդիականացնելու ենք բոլոր բնակավայրերի արտաքին լուսավորման

- Բարելավելու ենք աղբահանության համակարգը, ավելացնելու ենք աղբահավաքման պարբերականությունը:
- Աջակցելու ենք համայնքում նոր առեւտրային եւ սպասարկման կենտրոնների ստեղծմանը:

Զբոսաշրջություն

- Մշակութային միջոցառումների կազմակերպում՝ փառատոներ, համերգներ, ավանդական արհեստների ցուցադրություններ՝ զբոսաշրջիկների ներգրավման համար:
- Միջազգային համագործակցության ընդլայնում. Ֆրանկոֆոնիայի, ԵՄ, ՄԱԿ և այլ կառույցների ծրագրերով Վաղարշապատը ներկայացնել որպես զբոսաշրջային կենտրոն:
- Էլեկտրոնային հարթակի ստեղծում. առցանց պորտալ կամ հավելված, որտեղ հասանելի կլինի ամբողջ տեղեկատվությունը՝ հյուրանոցներ, պատմամշակութային կոթողներ, ռեստորաններ, միջոցառումներ:
- Կստեղծվի զբոսաշրջային տեղեկատու համակարգ:
- Ագրոտուրիզմի խթանում:
- Զբոսաշրջային միջավայրի բարեկարգում արդի տեխնոլոգիական լուծումներով:
- Կատարելու ենք հետևողական աշխատանքներ՝ համայնքում առկա զբոսաշրջային վայրերը առավել հասանելի, բարեկարգ և հետաքրքիր դարձնելու ուղղությամբ: Մշակվելու են ծրագրեր՝ նպատակ ունենալով նոր շունչ հաղորդել պատմամշակութային հուշարձաններին և տեսարժան վայրերին, ինչպես նաև դրանք ավելի լայնորեն ներկայացնել զբոսաշրջիկներին ու համայնքի բնակիչներին:

Կրթություն, մշակույթ, սպորտ

- Աջակցելու ենք դպրոցներին ուսումնական միջավայրի բարելավման եւ կազմակերպման հարցերում:
- Գործող մանկապարտեզների շենքերի վերանորոգում և բարեկարգում, նորերի կառուցում՝բնակչության պահանջարկը բավարարելու համար:
- Վերանորոգելու ենք համայնքապատկան գրադարանները, համալրելու գրքային ֆոնդը, ներդնելու միասնական կառավարման նոր համակարգ:

- Վերանորոգելու եւ/կամ նյութատեխնիկապես վերազինելու ենք մշակույթի տները, կազմակերպելու ենք մշակութային միջոցառումներ:
- Սպորտային դահլիճների, մարզադաշտերի և խաղահրապարակների արդիականացում:
- Մարզական խմբակների ու դպրոցների զարգացում:
- Տարբեր մարզական մրցաշարերի անցկացում:
- Մրցանակակիր մարզիկների և մարզիչների խրախուսում:
- Մշակելու ենք ծրագրեր և նախաձեռնություններ, խթանելու համար համայնքում սպորտն ու առողջ ապրելակերպը՝ այն դարձնելով բոլորի առօրյայի մասը:
- Աջակցելու ենք ուսանողներին տարբեր ծրագրերով՝ նրանց ուսումը դարձնելով ավելի մատչելի և հասանելի, կձեռնարկվեն նաև քայլեր՝ ուսանողների համար տրանսպորտային հնարավորությունները բարելավելու ուղղությամբ, որպեսզի յուրաքանչյուր երիտասարդ կարողանա առանց դժվարության հասնել իր կրթական հաստատություն:

Գյուղատնտեսություն եւ շրջակա միջավայր

- Շարունակելու ենք ներդրումներ կատարել ոռոգման ցանցի արդիականացման եւ նորոգման մեջ:
- Աջակցելու ենք գյուղմթերք վերամշակող եւ արտահանող ընկերություններին եւ անհատներին:
- Աջակցելու ենք գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաների ներդրմանը՝ նպաստելով մեր համայնքում ժամանակակից, արդյունավետ և եկամտաբեր գյուղատնտեսության ձևավորմանը:
- Համայնքի անունից լինելու ենք կամուրջ՝ գյուղատնտեսությամբ զբաղվող մեր քաղաքացիների և համապատասխան պետական գերատեսչությունների միջև, ներկայացնելու ենք առկա խնդիրներն ու առաջարկները, որպեսզի գյուղաջակցման ծրագրերը դառնան առավել հասցեական և արդյունավետ:
- Իրականացնելու ենք շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր:
- Հիմնելու եւ ավելացնելու ենք կանաչապատ տարածքները:
- Հաճախակի անցկացնելու ենք շաբաթօրյակներ և սանիտարական մաքրման աշխատանքներ, խթանելով քաղաքացիների մասնակցությունը համայնքի մաքրության պահպանմանը:
- Իրականացնելու ենք թեմատիկ արշավներ դպրոցներում, մանկապարտեզներում և նախակրթարաններում՝ նվիրված աղբի

տեսակավորմանը, վերամշակմանը և հավաքագրմանը, որպեսզի բնապահպանական գիտակցությունը ձևավորվի դեռ մանկուց:

Երիտասարդություն

- Մշակելու եւ ներդնելու ենք տեղական երիտասարդական ծրագրերին ուղղված քաղաքականություն:
- Ընդլայնելու ենք համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի խորհրդի կազմը:
- Աջակցելու ենք համայնքային երիտասարդական նախաձեռնություններին, խթանելով նրանց ակտիվ մասնակցությունը համայնքի զարգացման և խնդիրների վերհանման, լուծման գործընթացներում:
- Շարունակելու ենք աջակցել երիտասարդների ոչ-ֆորմալ կրթության եւ համընդհանուր զարգացմանն ուղղված երիտասարդական հարթակների, տարածքների, կենտրոնների ստեղծմանը:

Առողջապահություն եւ սոցիալական ոլորտ

- Շարունակելու ենք վերանորոգել բուժամբուլատորիաները, համագործակցել բժշկական հաստատությունների հետ, ավելի հասանելի եւ որակյալ ենք դարձնելու առաջնային բուժօգնությունը:
- Մշակելու եւ իրագործելու ենք ծրագրեր՝ ուղղված համայնքում առավել խոցելի խմբի ներկայացուցիչների խնդիրների լուծմանը:
- Սերտ համագործակցելու ենք պետական մարմինների ու հասարակական ոլորտի ներկայացուցիչների հետ սոցիալական ոլորտում, որի շնորհիվ կապահովենք ավելի արդյունավետ ծրագրերի իրականացում, աջակցություն առավել խոցելի խմբերին և համաչափ զարգացում համայնքի բոլոր բնակավայրերում:

Արտաքին հարաբերություններ

- Շարունակելու ենք զարգացնել միջհամայնքային կապերը:

- Ընդլայնելու ենք համագործակցությունը կարեւոր նշանակության ոլորտներում գործունեություն ծավալող տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ:
- Արտերկրի մեր համագործակցող վարչական միավորների հետ համագործակցության ծրագրերի ընդլայնում՝ փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման համար:
- Միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ գործընկերության խորացում:
- Սփյուռքի կառույցների հետ կապերի ամրապնդում:
- Մշակութային դիվանագիտության խթանում:
- Տուրիստական գովազդի և տեղեկատվական արշավների իրականացում արտասահմանյան շուկաներում:

Կուսակցության լիազոր ներկայացուցիչ
Մանավազյան Արուսյակ